ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2019/56

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8840-2019 գրությամբ «Գրանտշին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 23.05.2019թ. գրության հիման վրա, 29.05.2019թ. «Գրանտշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

«Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 23.05.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Բյուրեղականի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի փարածքի ցանկապատ-պարիսպի կառուցման աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպված ԲՀԴ-ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում «Գրանտշին» ՍՊԸ-ն հայտարարվել է ընտրված մասնակից:

«Գրանտշին» ՍՊԸ-ն պատշաճ կերպով ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, սակայն Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում «Գրանտշին» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել վերջինիս կողմից հաստատված պայմանագրի նախագիծը և պայմանագրի կատարման ապահովումը, ուստի գնահատող հանձնաժողովը զրկել է «Գրանտշին» ՍՊԸ-ին պայմանագիրը ստորագրելու իրավունքից:»:

3. <u>«Գրանտշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 31.05.2019թ. գրությամբ դիմել է «Գրանտշին» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8840-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպվել է «ԲՀԴ-ԳՀԱՇՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Գրանտշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.04.2019թ.-ին թիվ 4 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի հաղթող /ընտրված/ մասնակից է ճանաչվել «Գրանտշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 29.04.2019թ.-ին դիմել է Մասնակցին հայտնելով հետևյալը.

«Սույնով հայտնում եմ. որ N «ԲՀԴ-ԳՀԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «Գրանտշին» ՍՊԸ-ն և վաստակել 3 828 000 (Երեք միլիոն ութ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամի «Բյուրեղականի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ճաշարանի պահեստային մասի վերանորոգման աշխատանքների կատարման իրավունքը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածը և Ձեզ ուղարկված «ԲՀԴ-ԳՀԱՇՁԲ-19/2-2» գնման ընթացակարգի պայմանագրի նախագիծը, Ձեզ հետ կարող է կնքվել պայմանագիրը՝ օրենքով չարգելված ցանկացած ձևով 382 800 (Երեք հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր դրամ) ՀՀ դրամի չափով փոփոխության ձևով պայմանագրի կատարմանն սարահովում ներկայացնելու դեպքում՝ սույն առաջարկը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Համաձայն սույն ընթացակարգի հրավերի 9.4 կետի՝ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում հաստատված պայմանագրի նախագիծը և դրա ներկայացման գրությունը կամ Ձեր կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները ներկայացնել ՀՀ Կոտայքի մարզի «Բյուրեղականի հիմնական դպրոց» ՊՈԱԿ, ք. Բյուրեղավան Ս.Վարդանյան 2 հասցեով:»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.05.2019թ.-ին թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Գրանտշին» ՍՊԸ-ին պատշաճ կերպով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, սակայն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում Մասնակցի կողմից չի ներկայացվել պայմանագրի կատարման ապահովումը և պայմանագրի նախագիծը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է վերջինիս զրկել պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Նույն արձանագրության համաձայն՝ քանի որ «Գրանտշին» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց, գնահատող հանձնաժողովը որոշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի «բ» ենթակետի համաձայն Մասնակցի վերաբերյալ ունեցած տվյալները ներկայացել լիազոր մարմնին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8840-2019 գրությամբ «Գրանտշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10

աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում,

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպված «ԲՀԴ-ԳՀԱՇՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում հաղթող /ընտրված/ մասնակից է ճանաչվել «Գրանտշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 29.04.2019թ.-ին գրությամբ Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ, սակայն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, այն է՝ ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված և լրացված հրավերի պահանջներին համապատասխանող պայմանագրի ապահովումը և պայմանագրի նախագիծը:

Տվյալ դեպքում ընտրված/հաղթող/ մասնակցի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետներում իր կողմից հաստատված և լրացված հրավերի պահանջներին համապատասխանող պայմանագրի ապահովում չներկայացնելու հանգամանքը, Բողոքներ քննող անձը դիտարկում է և համարում՝ որպես պայմանագիր կնքելուց հրաժարում, որը նախատեսված է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գրանտշին» ՍՊԸ-ն, որպես ընտրված/հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով հաստատված և լրացված պայմանագրի ապահովումը և պայմանագրի նախագիծը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8840-2019 գրությամբ «Գրանտշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Գրանտշին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**